



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 մարտի 2020թ. թիվ 327-Ա

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19)
ԲԵՐՈՎԻՑ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԴԵՊՔՈՎ (ԿԼԱՍՏԵՐԱՅԻՆ ԴԵՊՔԵՐ)
ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ
ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ կետերով, 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «ե», «զ» և «է» կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ Տիգրան Ավինյանի մոտ 12.03.2020թ. կայացած խորհրդակցության թիվ ՓՎ/22-2020 արձանագրությունը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) բերովից երկրորդային դեպքով (կլաստերային դեպքեր) պայմանավորված արտակարգ իրավիճակների արձագանքման պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

16/03/20

ԱՆԴԻԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. մարտի 16
ք.Վանաձոր

Հավելված.
 ՀՀ Լոռու մարզպետի
 2020թ. մարտի 16-ի
 թիվ 327-Ա որոշման

ՊԼԱՆ
 ՀՀ Լոռու մարզի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) բերովից երկրորդային դեպքով (կլաստերային դեպքեր)
 պայմանավորված արտակարգ իրավիճակների արձագանքման

Հ/Հ	Միջոցառում	Ենթամիջոցառում	Պատասխանատու Համակատարող	Բյուջե	Կատարման Ժամկետը	Նշումներ
I. Արտակարգ իրավիճակներին արձագանքման մեխանիզմներ						
1.	Օպերատիվ շտաբի նիստեր ըստ անհրաժեշտության	1) Նիստերն արձանագրել՝ նախատեսելով համապատասխան միջոցառումներ և նշելով պատասխանատուներին	ՀՀ Լոռու մարզպետարան	Չի պահանջվում	Մշտապես	
2.	Իրականացնել համաճարակային կոնկրետ իրավիճակում կոնկրետ բոլոր	1) Գնահատել կորոնավիրուսի հետ կապված բոլոր վտանգները	ՀՀ Լոռու մարզպետարան	Չի պահանջվում	Պարբերաբար	

	վտանգների և ռիսկերի գնահատում, դրանց մասին տեղեկատվության փոխանակում ազգային և միջազգային շահագրգիռ կառույցների հետ	և ռիսկերը 2) Գնահատման արդյունքների մասին տեղեկատվությունը տրամադրել ազգային և միջազգային շահագրգիռ կառույցներին				
3.	Կորոնավիրուսի հետ կապված՝ հանրային առողջապահության ոլորտում արտակարգ իրավիճակներին արձագանքման մեխանիզմների գնահատման համար, պլանավորել, կազմակերպել և իրականացնել վարժանքներ	1) Մշակել վարժանքների սցենարներ 2) Կազմակերպել վարժանք՝ բոլոր շահագրգիռների մասնակցությամբ 3) Վարժանքների արդյունքում կատարել ուղղիչ գործողություններ արտակարգ իրավիճակների արձագանքման տարբեր խումբ միջոցառումներում	Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային վարչություն, ՀՀ Լոռու մարզպետարան, Առողջապահական ընկերություններ	Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Ըստ պլանի	
4.	Ձևավորել պահուստային պաշարներ և ապահովել մարդկային ռեսուրսներ՝ կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված արտակարգ իրավիճակին արձագանքման համար	1) Գնահատել կլաստերային դեպքերի և բռնկումների ժամանակ կանխատեսվող հիվանդների և մահերի թիվը 2) Սպասվող հիվանդության և մահվան դեպքերի թվից ելնելով՝ հաշվարկել անհրաժեշտ պահուստային պաշարները՝ դեղորայքի, ախտահանիչների, անհատական	Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային վարչություն, ՀՀ Լոռու մարզպետարան, Առողջապահական ընկերություններ	Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Մշտապես	

		<p>պաշտպանության միտոցների, տրանսպորտի</p> <p>3) Գնահատել կորոնավիրուսային հիվանդության կլաստերային դեպքերի և բռնկումների ժամանակ անհրաժեշտ մարդկային ռեսուրսները</p> <p>4) Ապահովել առանցքային մասնագետների փոխարինելիությունը</p>				
II. Ռիսկերի հաղորդակցում և հանրության ներգրավվածություն						
5.	Ըստ տվյալ պլանի՝ միջոցառումների համապատասխան բյուջետային միջոցների հատկացում	<p>1) Գնահատել սույն պլանով նախատեսված միջոցառումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները</p> <p>2) Վեր հանել ֆինանսավորման հետ կապված խնդիրները և ներկայացնել առաջարկություններ դրանց լուծման ուղղությամբ՝ սահմանելով բյուջետային միջոցների հատկացման նոր աղբյուրներ</p>	Ֆինանսների նախարարություն, «Լոռու մարզպետարան»	Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Ըստ անհրաժեշտության	
6.	Համակարգել հաղորդակցման համայնքների ներգրավվածության մասնագիտական թիմերի աշխատանքը և ռիսկերի թիմերի	1) Համակարգել բոլոր մակարդակներում՝ ազգային, մարզային և համայնքային, մասնագիտական թիմերի աշխատանքը՝	Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային վարչություն,	Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Մշտապես	

		<p>իրականացնելով ռիսկի հաղորդակցում և համայնքների ներգրավվածություն</p> <p>2) Ներկայացնել թիմերի աշխատանքի պարբերական հաշվետվություններ</p> <p>3) Վեր հանել մասնագիտական թիմերի աշխատանքի ընթացքում առկա խոչընդոտները և խնդիրները, դրանց լուծման ուղղությամբ ներկայացնել առաջարկություններ միջգերատեսչական հանձնաժողովին</p>	<p>ՀՀ Լոռու մարզպետարան,</p> <p>Առողջապահական ընկերություններ, ՀՀ Լոռու մարզի համայնքապետարաններ</p>			
7.	<p>Ակտիվորեն հաղորդակցել կորոնավիրուսային հիվանդության առնչությամբ ռիսկի ենթակա հանրության հետ՝ ռիսկի հաղորդակցման և բնակչության ներգրավման միջոցով</p>	<p>1) Ակտիվացնել ռիսկերի հաղորդակցման և համայնքների ներգրավվածության հարցերով գործողությունների պլանները</p> <p>2) Ըստ պլանի իրականացնել գույքագրված ռիսկերի վերաբերյալ բնակչության հետ հաղորդակցում</p>	<p>Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային վարչություն, ՀՀ Լոռու մարզպետարան,</p> <p>Առողջապահական ընկերություններ, ՀՀ Լոռու մարզի համայնքապետարաններ</p>	Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Մշտապես	
8.	<p>Մշակել և ներդնել սոցիալական մոբիլիզացման պլան</p>	<p>1) Որոշել բնակչության՝ հաղորդակցման ենթակա խմբերը</p> <p>2) Մշակել</p>	<p>Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության</p>	Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Պլանը գործադրելուց հետո մեկ ամսվա	

		<p>հաղորդակցման միջոցառումները</p> <p>3) Որոշել հաղորդակցման ձևերը</p> <p>4) Ստեղծել սոցիալական մոբիլիզացման աշխատանքները համակարգող թիմ</p>	<p>Լոռու մարզային վարչություն, ՀՀ Լոռու մարզպետարան</p> <p>Առողջապահական ընկերություններ, ՀՀ Լոռու մարզի համայնքապետարաններ, ՀՀ աշխատանքի և առողջապահական տեսչական մարմին, հյուսիսային տարածքային կենտրոն</p>		<p>ընթացքում</p>	
9.	<p>Որոշել բնակչության հետ հաղորդակցումն ապահովող խոսնակներին, ՋԼՄ-երը, սահմանել դրանց գործառույթները</p>	<p>1) Սահմանել բոլոր մակարդակներում բնակչության հետ հաղորդակցումն ապահովող խոսնակներին</p> <p>2) Որոշել առանցքային ՋԼՄ-երը՝ կորոնավիրուսային հիվանդության առնչությամբ բնակչության հետ հաղորդակցումն ապահովելու համար</p> <p>3) Սահմանել նանց գործառույթները</p>	<p>ՀՀ Լոռու մարզպետարան, ՀՀ ԱՆ «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ «Լոռի» մասնաճյուղ</p>	<p>Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>	<p>Պլանը գործադրելուց հետո 20 օրվա ընթացքում</p>	
10.	<p>Ստեղծել ասեկոսների կառավարման համակարգ</p>	<p>1) Որոշել ասեկոսների հնարավոր աղբյուրները</p> <p>2) Մշակել մեխանիզմներ դրանց կառավարման համար</p>	<p>ՀՀ Լոռու մարզպետարան ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչություն, ՀՀ ԱԱԾ Լոռու</p>	<p>Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>	<p>Պլանը գործադրելուց հետո 20 օրվա ընթացքում</p>	

			մարզային վարչություն, ՀՀ Լոռու մարզի համայնքապետարաններ, ՀՀ ԱՆ «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ «Լոռի» մասնաճյուղ			
III. Դեպքերի հայտնաբերում, շփվածների հետազոծում և կառավարում						
11.	ԱՀԿ մոտեցումներին համապատասխան՝ վերանայել և ներդնել կորոնավիրուսային հիվանդության դեպքի ստանդարտ սահմանումը	1) ԱՀԿ կորոնավիրուսային հիվանդության դեպքի ստանդարտ սահմանմանը համապատասխան վերանայել գործող դեպքի ստանդարտ սահմանումը 2) Վերանայված դեպքի ստանդարտ սահմանման մասին իրազեկել բուժանձնակազմին 3) Իրականացնել սեմինար-դասընթաց դեպքի ստանդարտ սահմանմանը ծանոթացնելու նպատակով	ՀՀ Լոռու մարզպետարան, ՀՀ ԱՆ «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ «Լոռի» մասնաճյուղ, ՀՀ Լոռու մարզի առողջապահական ընկերություններ	Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Ըստ անհրաժեշտության	
12.	Վարել կորոնավիրուսային հիվանդության կլինիկական տվյալների բազա՝ Հայաստանում արձանագրված դեպքերի կլինիկական առանձնահատկությունները հաշվառելու և վերլուծելու նպատակով	1) Գրանցել կորոնավիրուսային վարակի բոլոր դեպքերի կլինիկական դրսևորումները 2) Շարունակականորեն իրականացնել պացիենտների կողմից ընդունված հակավիրուսային կամ այլ չիցենզավորված կամ կլինիկական փորձարկումներ անցնող դեղորայքի կիրառման	ՀՀ Լոռու մարզպետարան ՀՀ Լոռու մարզի առողջապահական ընկերություններ	Պետական բյուջե և օրենքով չարգելվող այլ միջոցներ	Մշտապես	

		դրսևորումների մշտադիտարկում				
13.	Արձանագրված դեպքերի հետ շփված անձանց տեսակավորման, կարանտինի կազմակերպման հսկողության գործընթացը կանոնակարգող իրավական ակտի/երի մշակում	1) Գույքագրել կորոնավիրուսային հիվանդության դեպքերի հետ շփված անձանց տեսակավորման, կարանտինի կազմակերպման հսկողության վերաբերյալ գործող իրավական ակտերի պահանջները 2) Դրանք համադրել ԱՀԿ՝ համաճարակային գործընթացի զարգացման տվյալ փուլին համապատասխան մոտեցումների հետ 3) Վերանայել գործող իրավական ակտերը	ՀՀ Լոռու մարզպետարան ՀՀ Լոռու մարզի առողջապահական ընկերություններ ՀՀ ԱՆ «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ «Լոռի» մասնաճյուղ	Չի պահանջվում	Պլանը գործադրելուց հետո մեկ ամսվա ընթացքում	
IV. Համաճարակաբանական դիտարկում						
14.	Կորոնավիրուսային հիվանդության համաճարակաբանական դիտարկման համակարգը ինտեգրել գործող համաճարակաբանական դիտարկման համակարգում (գրիպանման հիվանդություն, սուր շնչական վարակ և ծանր սուր շնչական վարակ)	1) Ծանր սուր շնչառական վարակի դեպքերը հետազոտել նաև Կորոնավիրուսային հիվանդության նկատմամբ	ՀՀ Լոռու մարզպետարան ՀՀ Լոռու մարզի առողջապահական ընկերություններ ՀՀ ԱՆ «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ «Լոռի» մասնաճյուղ, ՀՀ աշխատանքի և առողջապահական տեսչական մարմին, հյուսիսային	Պետական բյուջե և օրենքով չարգելվող այլ միջոցներ	Մշտապես	

			տարածքային կենտրոն			
15.	Ապահովել Կորոնավիրուսային հիվանդության արձանագրված դեպքերի մասին ժամանակին հաղորդումը ԱՀԿ	1) Միջազգային առողջապահական կանոնների հարցերով ազգային համակարգող մարմնի միջոցով, 24 ժամվա ընթացքում, հաղորդել դեպքի մասին ԱՀԿ 2) Լրացնել ԱՀԿ-ի դեպքի հաղորդման ձևաչափը յուրաքանչյուր հավանական և հաստատված դեպքի համար և ուղարկել euoihr@who.int հղմամբ	Առողջապահության նախարարություն	Չի պահանջվում	Դեպք արձանագրել իս	
V. Հանրային առողջապահական միջոցառումներ						
16.	Բնակչության շրջանում իրականացնել բժշկահիգիենիկ կրթում՝ ձեռքերի հիգիենայի, հազալու և փոշտալու վարվելակարգի, սոցիալական տարածքության պահպանման վերաբերյալ	1) Մշակել բժշկահիգիենիկ կրթության մեխանիզմները, ոլորշել լսարանը, ուղերձները 2) Մշակել և գործադրել բժշկահիգիենիկ կրթության ծրագիր	ՀՀ Լոռու մարզպետարան ՀՀ Լոռու մարզի առողջապահական ընկերություններ ՀՀ ԱՆ «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ «Լոռի» մասնաճյուղ	Չի պահանջվում	Մշտապես	
17.	Զբոսաշրջային օպերատորների շրջանում իրականացնել սեմինարներ՝ զբոսաշրջիկների համար բժշկահիգիենիկ կրթություն իրականացնելու նպատակով	1) Մշակել ծրագիր՝ զբոսաշրջային օպերատորների շրջանում սեմինարներ և զբոսաշրջիկների համար բժշկահիգիենիկ կրթություն իրականացնելու նպատակով	ՀՀ Լոռու մարզի առողջապահական ընկերություններ ՀՀ ԱՆ «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ «Լոռի» մասնաճյուղ	Չի պահանջվում	Ըստ ծրագրի	
VI. Լաբորատոր թեստավորում						

18.	Գնահատել նմուշների հավաքման և վարման համապատասխանությունը գործող ընթացակարգերին	1) Մշակել գնահատման գործիք 2) Ըստ գործիքի իրականացնել գործող ընթացակարգերին նմուշների հավաքման և վարման համապատասխանության գնահատում	ՀՀ Լոռու մարզի առողջապահական ընկերություններ ՀՀ ԱՆ «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ «Լոռի» մասնաճյուղ	Չի պահանջվում	Մշտապես	
19.	Կորոնավիրուսի նկատմամբ հետազոտություններ իրականացնող լաբորատորիաներում ներդնել այս վիրուսի հետ աշխատելու կենսանվտանգության ԳՍԸ	1) Մշակել և ներդնել կորոնավիրուսի հետ աշխատելու կենսանվտանգության ԳՍԸ՝ ԱՀԿ մոտեցումներին համապատասխան	ՀՀ ԱՆ «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ «Լոռի» մասնաճյուղ	Չի պահանջվում	Պլանը գործադրելուց հետո 15 օրվա ընթացքում	
20.	Մշակել և ներդնել լաբորատոր նմուշառման և հետազոտման ԳՍԸ-ներ՝ ըստ կորոնավիրուսային հիվանդության դեպքի ստանդարտ սահմանման	1) Մշակել կորոնավիրուսային հիվանդության նկատմամբ նմուշառման և նմուշների հետազոտության ԳՍԸ-ներ 2) Իրականացնել սեմինարներ լաբորատոր անձնակազմի և նմուշառողների շրջանում ԳՍԸ-ի ներդրման նպատակով	ՀՀ ԱՆ «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ «Լոռի» մասնաճյուղ	Չի պահանջվում	Պլանը գործադրելուց հետո մեկ ամսվա ընթացքում	
VII. Դեպքի վարում						
21.	Նախատպատրաստել կորոնավիրուսային հիվանդությամբ հիվանդների մեծ հոսքի համար բժշկական օգնության և սպասարկման (ռեֆերալ)	1) Գնահատել հիվանդների հնարավոր հոսքերը 2) Ընտրել համապատասխան բժշկական	ՀՀ Լոռու մարզպետարան ՀՀ Լոռու մարզի առողջապահական ընկերություններ	Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Պլանը գործադրելուց հետո մեկ ամսվա ընթացքում	

	կազմակերպություններ	<p>կազմակերպություններ</p> <p>3) ԱՀԿ մոտեցումների հիման վրա մշակել գնահատման գործիք և գնահատել կոնկրետ բժշկական կազմակերպություններն ընտրելու նպատակահարմարությունը՝ փաստացի արդյունքների հիման վրա</p> <p>4) Իրականացնել ընտրված կազմակերպությունների նյութատեխնիկական ապահովումը</p> <p>5) Բժշկական կազմակերպություններն ապահովել անհրաժեշտ մարդկային ներուժով</p>	ՀՀ ԱՆ «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ «Լոռի» մասնաճյուղ			
22.	Մշակել և ներդնել հիվանդների տեսակավորման ընթացակարգ	<p>1) Ուսումնասիրել միջազգային փորձը</p> <p>2) Մշակել և ներդնել հիվանդների տեսակավորման ընթացակարգ</p>	<p>ՀՀ Լոռու մարզպետարան</p> <p>ՀՀ Լոռու մարզի առողջապահական ընկերություններ</p> <p>ՀՀ ԱՆ «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ «Լոռի» մասնաճյուղ</p>	Չի պահանջվում	Պլանը գործադրելուց հետո 45 օրվա ընթացքում	
23.	Ակտիվացնել բժշկական կազմակերպությունների՝ արտակարգ իրավիճակների պատրաստվածության և արձագանքման պլանները	<p>1) Քննության առնել բժշկական կազմակերպությունների՝ արտակարգ իրավիճակների</p>	<p>ՀՀ Լոռու մարզպետարան</p> <p>ՀՀ Լոռու մարզի առողջապահական</p>	Չի պահանջվում	Պլանը գործադրելուց հետո 45 օրվա ընթացքում	

		պատրաստվածության և արձագանքման պլաններով նախատեսված միջոցառումները 2) Անհրաժեշտության դեպքում դրանք վերանայել և լրամշակել	ընկերություններ			
24.	ԱՀԿ մոտեցումներին համապատասխան՝ վերանայել կորոնավիրուսային հիվանդությամբ հիվանդների բուժման ուղեցույցը և գործելակարգը	1) Գույքագրել ԱՀԿ մոտեցումները՝ կորոնավիրուսային հիվանդությամբ հիվանդների բուժման վերաբերյալ 2) Անհրաժեշտության դեպքում՝ վերանայել կորոնավիրուսային հիվանդությամբ հիվանդների բուժման ուղեցույցը և գործելակարգը	Առողջապահության նախարարություն ՀՀ Լոռու մարզպետարան ՀՀ Լոռու մարզի առողջապահական ընկերություններ	Չի պահանջվում	Պլանը գործադրելուց հետո 45 օրվա ընթացքում	
VIII. Պետական սահմանի անցման կետեր						
25.	Ապահովել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի № 777-Ն, 2011 թվականի մայիսի 12-ի № 702-Ն որոշումներում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Կառավարության որոշման պահանջների գործադրումը	1) Սահմանել հսկողություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի № 777-Ն որոշման պահանջները՝ յուրաքանչյուր անցակետում գործարկել արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրի գործադրման նկատմամբ	ՀՀ Լոռու մարզպետարան, ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչություն, ՀՀ ԱԱԾ Լոռու մարզային վարչություն, ՀՀ ԱՆ «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ «Լոռի» մասնաճյուղ, ՀՀ աշխատանքի և առողջապահական տեսչական մարմին, հյուսիսային տարածքային կենտրոն,	Չի պահանջվում	Ըստ անհրաժեշտության	

			ՍԱՏՄ Լոռու մարզային կենտրոն			
26.	Պետական սահմանի անցման կետերում հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմինների աշխատակիցներին մշտապես ապահովել անհատական պաշտպանության միջոցներով և ախտահանիչ նյութերով	1) Գնահատել պետական սահմանի անցման կետերում հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմինների աշխատակիցներին անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցների և ախտահանիչ նյութերի կարիքները 2) Ապահովել ամհրաժեշտ պահուստային միջոցներ	ՀՀ ԱԱԾ Լոռու մարզային վարչություն, ՀՀ աշխատանքի և առողջապահական տեսչական մարմին, հյուսիսային տարածքային կենտրոն, ՀՀ պետական եկամուտների կոմիտե	Պետական բյուջե և օրենքով չարգելվող այլ միջոցներ	Մշտապես	
27.	Միջազգային առողջապահական կանոնների պահանջներից ելնելով՝ պլանավորել և գնահատել պետական սահմանի անցման կետերում արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը և իրականացվող միջոցառումները, վեր հանել բացերը և մշակել պլան դրանք արագ ուղղելու համար	1) Կազմել գնահատող աշխատանքային խումբ 2) Կազմել գնահատման հարցաշար՝ ԱՀԿ մոտեցումների հիման վրա 3) Գնահատումն իրականացնել երկու փուլով՝ սեղանի շուրջ և գործնականում 4) Գնահատման արդյունքների հիման վրա վեր հանել բացերը 5) Մշակել դրանք արագ ուղղելու պլան	Առողջապահության նախարարություն (Միջազգային առողջապահական կանոնների հարցերով ազգային համակարգող մարմին) Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին Ազգային	Չի պահանջվում	Ըստ պլանի	

			<p>անվտանգության ծառայություն, Սահմանապահ զորքեր</p> <p>Արտակարգ իրավիճակների նախարարություն</p> <p>Քաղաքացիական ավիացիայի կոմիտե</p> <p>Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե</p> <p>Հայաստանի Հանրապետության ոստիկանություն</p>			
--	--	--	---	--	--	--

IX. Վարակի հսկողություն

28.	<p>Բոլոր մակարդակի բժշկական կազմակերպություններում պլանավորել և իրականացնել վարակի հսկողության ռիսկերի գնահատում, որոշել հիվանդների մեծ հոսքերի ժամանակ վարակի հսկողության կարողությունները</p>	<p>1) Շարունակաբար համագործակցել բժշկական կազմակերպությունների վարակի հսկողության պատասխանատուների հետ՝ ապահովելով հետադարձ կապը</p> <p>2) Պլանավորել և իրականացնել վարակի հսկողության ռիսկերի գնահատում՝ ԱՀԿ մոտեցումներին համապատասխան գործիքով,</p>	<p>ՀՀ Լոռու մարզպետարան, ՀՀ Լոռու մարզի առողջապահական ընկերություններ, ՀՀ ԱՆ «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ «Լոռի» մասնաճյուղ</p>	Չի պահանջվում	Ըստ պլանի	
-----	---	--	---	---------------	-----------	--

		3) Որոշել հիվանդների մեծ հոսքերի ժամանակ վարակի հսկողության կարողությունները				
29.	Իրականացնել վարակի հսկողության պատասխանատուների և կլինիկական մենեջմենթի մասնագետների կրթումը կորոնավիրուսային հիվանդության հետ կապված վարակի հսկողության հարցերով	1) Մշակել կրթական ծրագիր 2) Գնահատել կրթական կարիքները 3) Որոշել դասավանդողներին 4) Իրականացնել կրթում	ՀՀ Լոռու մարզպետարան, ՀՀ ԱՆ «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ «Լոռի» մասնաճյուղ, ՀՀ Լոռու մարզի առողջապահական ընկերություններ	Պետական բյուջե և օրենքով չարգելվող այլ միջոցներ	Մշտապես	
30.	Ապահովել թեթև դեպքերի՝ տանը բուժման կազմակերպումը	1Ձ Ապահովել դեպքերի հայտնաբերումը 2Ձ Ապահովել հիվանդների հետ շփված անձանց հսկողությունը 3Ձ Մշակել ԳՍԸ՝ տանը բուժվող հիվանդության թեթև ձևերի համար	ՀՀ Լոռու մարզպետարան, ՀՀ ԱՆ «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ «Լոռի» մասնաճյուղ, ՀՀ Լոռու մարզի առողջապահական ընկերություններ	Չի պահանջվում	Մշտապես	
X. Սոցիալական արձագանքում						

31.	Ուղևորություններ և առևտուր կազմակերպելիս և իրականացնելիս՝ առաջնորդվել Միջազգային առողջապահական կանոնների պահանջներով	1) Կազմակերպել պարբերական քննարկումներ զբոսաշրջային առևտրային ոլորտների հետ և	<p>ՀՀ Լոռու մարզպետարան</p> <p>Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Լոռու մարզային կենտրոն, Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային վարչություն</p>	Չի պահանջվում	Մշտապես
-----	--	---	---	---------------	---------

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

03/16/20



ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ